



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

623.4
U-61

Հ. Ս. Խ. Հ.

Եթե բայու լեռների, միացի ք

ՅԵ-ԱՄԻՍԼՈՎԱԿԻ

ՀՐԵՏԱՆԻ



Թարգ. 97.



№ 15

Կ. Կ. Բանակի Ռազմա-Հեղափոխական Խորհրդին կից
Հայկական Խմբագր.-Հրատարակչական Կոլեգիա

ՅԵՐԵՎԱՆ—1925

73 240

04 AUG 2010
ELOS 2010

Ա. Խ. Հ. Ա.

Հ. Ս. Խ. Հ.

ՊԵՂԱԿԱՆ ՔՈՂՈՎ ՀԵՂԵՐԻՆԻ, ՄԻՋՈՒՄ

**ՀԱՅԿ. ԽՄԲԱԳՐ.-ՀՐԱՏ. ԿՈԼԼԵԳԻԱՅԻ ՀՐԱՏԱ-
ՐԱԿՈՒԹՅԱՄԱՐ ԼՈՒՅ ԵՆ ՏԵՍԵԼ**

1. Անվալիդ — Հրացանա - հրածգային գործ
փոխ. Գ. Կուրանյան 35 կ.
2. [REDACTED] — Հրացանա - թարգ. թարգ.
Գ. Տ. - Ա. 20 կ.
3. Գործվակի. — Բանվոր գոսակարգի և մ. կ. կ.
դրաշի տակ. թարգ. Լ. Դանիելյանի 40 կ.
4. Առզնվակի. — Բողոքակում I մաս թարգ.
Հ. Ալեքյան 20 կ.
5. Առզնվակի. — Բողոքակում II և III մաս թարգ.
Հ. Ալեքյան 50 կ.
6. Մ. Օտափես. — Կարմիր բանակ. թարգ.
Մ. Տ. - Հովհաննիսյան 15 կ.
7. Հուշատեսք հրացանաձիգ կարմիր բանակա-
յինի 1891 թվականի տիտարի
Յ գծանի հրացանը ինսամելու հա-
մար. թարգ. Մ. Տ. - Հովհաննիսյան 20 կ.
8. Բ. - Գ. կ. Բ. Հետեակի ժամանակավոր մար-
տական կանոնագիրք մասն 1
թարգ. Ար. Անանյան 75 կ.
9. Ա. Խ. Հ. Մ. Ա. - Հ. Խ. 1924 թ. № 1397 հրա-
ման. Հետեակի ժամ. մարտ. կա-
նոն. I մասի. գագ. և փոփոխ.
թարգ. Ար. Անանյան 15 կ.

623.4
U-61

ՅԵ. ԱՄԻՆՈՎՎԱԿԻ

ՀՐԵՏԱՆԻ

Հ	Հ
Հ	Հ
Հ	Հ
Հ	Հ
Հ	Հ

Թարգ.

Գր. ԱՌԵՐ- ԱԿԱԿԱՆ ՎՐԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆ

№ 15

Կ. Ա. Բանակի Մազմա-Հեղափոխական Խորհրդին կից
Հալիկանի Խմբագր. - Հրատարակական Կոլլեգիա

ՅԵՐԵՎԱՆ - 1925

ՀԵՂԻՆԱԿԻՑ

Համաձայն ստացածու պատվերի, ոռոշն զրքույկը զրված է այն նպատակով, վորողին հրամանատարական կազմին տրվեն տեղեկատու գիտելիքների հրետանու մարտական հատկությունների և մարտական գործադրության մասին, ամփոփ ու կարճապոտ շարադրությամբ, վոր սահմանափակված է վորոշ ծավալով։ Աշխատանքի նման բնույթի շնորհիվ, հարկ յեղակ վոչ միայն կրծատել ծրագիրը, այլև ամբողջ շարադրությունը, անտեսելով նախագասությունները, ու մինչև իսկ բառերը։

Գրքույկում պարունակած տեղեկությունները հարմարեցրված են այն հրետանուն, վորով ներկայումս զինված է Կարմիր բանակը, և առաջին հերթին այդ տեղեկությունները հարմարեցրված են պաշտոնական կանոնագրքերին, հրահանգներին ու ձեռնարկներին, վորոնցով վորոշվում է հրետանու մարտական աշխատանքը։ Բայց և այնպիս շնորհիվ այն հանգամանքին, վոր ներկայումս վերաբնվում են այդ պաշտոնական հրատարակություններից շատերը, իրագործել այդ՝ ամեն անգամ չի աջողվել։ այս

դեպքում գրքույկում դետեղված են այն տեղեւիունները, ցուցումները կամ արտահայտած դադափարները, վորոնք համաձայնեցրված են դիտական դրականության մեջ տիրող հայացքներին, հարմարեցնելով նրանց մեր իրականությանն ու հնարավորություններին և հաշվի առնելով անցած պատերազմների փորձառությունը:

Վերջին հանգամանքը պիտի նկատի ունենալ, և հետզհետե, յերբ լույս են տեսնում պաշտանական այնպիսի հրատարակություններ, վորոնք վորոշում են հրետանու մարտական աշխատանքը, կարիք յեղած դեպքում, անհրաժեշտ են մացնել համապատասխան ուղղումներ:

ՅԵ. Սմիւլուսիկ

ՀՐԵՏԱՆՈՒ ԴԵՐԸ, ՄԵՐՏԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱ ՎՐԱ ԴՐԱՅՈՂ ԽՆԴԻԲՆԵՐԸ

1. Հրետանու դերն ե հարվածելով հակառակորդի ակտիվ ուժերն ու ավերելով՝ նրա պաշտպանության միջնորդությունները, աշխատանքելու ստեղծելու և աշխատական աշխատանքը, կարիք յեղած դեպքում, անհրաժեշտ ե մացնել համապատասխան ուղղումներ:

Մարտունմ հետեակի (հեծելազորի) հրետանու գործողություններն անբաժան են:

2. Հրետանու մարտական հատկությունները.

- ա) նա ուժեղ ե միայն իր կրտելով.
- բ) հարվածե հասցնում հանկարծակի, արագ և վճռական կերպով. գ) ընդունակ ե խիստ ավերիչ գործողության.
- դ) գործում ե մեծ հեռակայությունների վրա ճակատով և խորությամբ մեծ տարածություն ունեցող տեղամասի վեմ.
- ե) հռւասալի յե իր գործողության մեջ,

կայսեր ե մարտում. զ) բարոյական ա-
ջակցություն ե ցույց տալիս իր զորամասերին,
բարոյական ազդեցություն ե գործում հակա-
ռակօրդի վրա. 1.) ավելի լավ ե կռվում, քան
հետեակը ողային հակառակորդի դեմ.
2) մեծ հետակայությունների վրա գործում ե
ը իմիտական սիջոցներով. թ) հեշտ ե յեն-
թարկվում դեկավարության (մարտի
մժբողջ ընթացքում պետի ձեռքումն ե գտնվում,
— սրա հետեանքը աշխատանքի սիացումն ե).
ժ) գործում ե համարյա ամեն տեսակ
տեղանքում, զորաշշարժ ե կատա-
րում և ընդունակ ե կրակ մղելու իր
զորքերի գլխավերից (ժա) հսարա-
փորություն ունենալով շարունակ իրազեկ իի-
նելու պարագայի նկատմամբ, հետախու-
զության արժեքավոր արդյունք
ներ ե տալիս. ժբ) ընդունակ ե ագի-
տացիոն գործողություններ կատարելու.

Դրա հետ միասին. ա) ընդունակ չե-
մարտը վերջնական վախճանին հասցնելու-
ընդունակ չե ինքնուրուցն գործողու-
թյուններ կատարելու. թ) անպաշտուան ե
յերթի ժամանակի մարտական գրության անց-
նելիս և ընդհակառակն այդ զրությունը փոխե-
լիս, անպաշտապան ե ինքնապաշտապանության

նկատմամբ այն հակառակորդի կողմից, զորք
մտանաւմ ե նոսք շարքերով. զ) աջող զործո-
գությունները պահանջում են նախապատ-
րաստության համար ժամանակ և
կրապաշտի մեծ ծախք. գ) նրա գոր-
ծողությունները կախում ունեն տեղանքի
գրությունից՝ շարժման ժամանակ, նրա
ուելյեֆից (տեսածիք, գնդակոծ), նշանները
ուենելու պայմաններից, յեղանակից. ե) բարդ
իր կազմության, համալրման, ուսուցման
և հայթայթման տեսակետից:

3. Հրեսանու վրա դրվող խնդիրներ.
Ժույլատը ելի չե, զորք նըետանին
գործի առանց նպատական արժուա-
ծենով տը ված մարտական խնդրի:
Հիմնական նպատակն ե նյու-
թական ազդեցությունն զործելը
(հարվածականություն, ավերմունք). միաժա-
մանակ ձեռք ե բերվում նաև հակայական բա-
րույական ազդեցություն:

Ա) Ահա այն մարտավարական խըն-
դիրները, զորոնք արփում են ընդհա-
նուրու զորական պետի ցուցումներով.
ա) մարտի սկզբին հեռվից կանգնեցնել
հակառակորդին, ստիպել նրան բացազատվել և

մարտի բանվել. թ) կովել հակառակորդի հրետա-
նու դեմ. դ) աջակցել հետեւակի մերձենալուն
հակառակորդի հետ. դ) նախապատրաստել զը-
ռույթը. ե) աջակցել նրա կատարելուն և զար-
գացնելուն. դ) ապահովել գրաված տեղամասն
ամբացնելն ու հետագա առաջնադաշտումը (ու-
ղեկցով հրետանի) է.) հետապնդել կրակով և
զորաշարժով. ը) թույլ չտալ, վոր պաշտպանու-
թյան ժամանակ հակառակորդն իր զորքերի խր-
ռամատները մտնի. թ) պաշտպանել իր զորքե-
րի յետ խաղացումը. ժ) կովել ողային հակա-
ռակորդի դեմ. ժա) զըկել հակառակորդին
հանգստից և խախտել նրա թիկունքային կյանքն
ու զործունեյությունը.

Բ. Տեխնիկական (կրակի) խնդիր -
ներ, վոր մասնանշում են հրետանային
ոլետերը. ա) հակառակորդի հետեւակին հար-
վածել մերձեցման ամբողջ ընթացքում. թ) կը-
րակել հակառակորդի հրետանու դեմ, աշխատե-
լով նրան վոչնչացնել կամ գոնե ճնշել. դ) ամ-
բողջ ճակատում և առանձնապես հարվածի հա-
մար նշանակված տեղամասում հակառակորդից
հրացանային և գնդացրային կրակը ճնշել. դ) ար-
հետական արգելքները, կառուցվածքները, իր-
քամատներն ավերել. ե) կրակի պատճենները
ստեղծել դույթի և պաշտպանության ժամա-

նակ. զ) խափանիչ կրակ. է.) հակառակորդի՝ զը-
ռոնը յետ մղելը լ) հակազրոնին աջակցել. թ) հա-
կառակորդի զըռահապատ մեքենաները վոչըն-
չացնել. ժ) կովել ողային նավատորմիդի դեմ.
ժա) թիկունքային նշանները հարվածել:

ՀՐԱՆՈԹՆԵՐԻ, ԱՐԿԵՐԻ ՅԵՎ ՀՐԵՏԱՆԱԽ
ՏԵՍԱԿՆԵՐԸ

4. Հրանոթների յեվ արկերի զանազան
տեսակները. Հրետանու ոմբակոծման յենթակա-
զանաղան նշաններն անխուսափելիորեն պահան-
ջում են զանազան տեսակի հրանոթ -
ներ և արկեր :

Կենդանի նշաններ, վորոնք հար-
վածվում են մահաբեր փոքրիկ գնդակով (գնդա-
կի կտորով), բաղմաթիվ են, շարժումն են, ըն-
դունակ են փոքրացնել իրենց հարվածելի մա-
կերեցթը, վորոնք կարող են խուսափել
կրակից, իրենց հարվածելու համար պահան-
ջում են ավելի մեծ թվով հարվածելիները), պահան-
ջում են ստեղծել ընդարձակ հարվածել -
ի շրջաններ (մակերեսներ): Երանց հար-
վածելու համար անհրաժեշտ են կարտեչի
(կտորտանքների) զօրծողություն ունեցող ար-
կեր - շրջապահներ, փշրտող (բըթզանա)

Ն ո ն ա կ (փոքր պլայթուցիկ լիցք ունեցող արկ)։ Հրապնելով հարվածելու ընդարձակ (խոր) շըր-ջաններ ստեղծելու համար պահանջվում է գետնամերձ հետագիծ և արագած զություն։

Այն դեպքում, յերբ կենդանի նը-շանները ծածկված են կրակից և ա-կատի կողմից (արհեստական կառուց-քածքներով, աեղանքի ուղղորդ լանջերով), նրանց կարտեչի գործողության արկերով հարվածելու համար պահանջվում է ուղղորդ հետա-գիծ։ Ճակատից ու վերեվից ծածկված թաքառոցներում կամ ապաստարաններում գտնվող կենդանին նշանները կա-րելի յեն հարվածել միայն այնպիսի արկերով, վորոնք ագերում են կամ ծակում ծակում ծածկոցները։ Ամեն տեսակի կենդանին նը-շաններ, վորոնք նույնիսկ թաքառոցների շետակում են գտնվում, կարելի յեն լավ հարվածել քիմիական արկերով։

Մեռյալ նշաններ—բնական կամ արհես-տական թաքառոցներ (ամրաշինական կառուց-քածքներ, կամուրջներ, աներ և այլն), վորոնք առավել կամ պակաս ամրություն ունեն, ավերելու համար պահանջվում է զիսավորապես ուղղորդ հետագիծ ունեցող ծակում անցնող

և մանավանդ ֆուգա սահմանին գործող ուղության արկեր, (ըստ հնարավորության մեծ չափով պայթուցիկ լիցքով), ըստ հնարավորության ագելի ճիշտ և անխուսափելիորեն գանդաղաղ հրաժարական թաքառուցները (զրա-հակեր նավատորմիղ, տանկեր, զրահապատ զը-նացքներ և այլն) մեծ մասամբ պահանջվում են գետագերձ հետագիծ և արագած զություն։ Թույլ գիմագրություն արկերով (գլխավորապես կտորանքներով),

Այն նշանները, վորոնց գործող ուղության կենդանի ուժերը ներտ կապ ունեն այն ապարատների ուժ մեջ գործների ու արագին լինելու հետ, վորոնցով նա մարտ են մղում (խառը տեսակի նշաններ), որինակ՝ հրետանի, սակառ-նակներ, զրահապատ մեքենաներ, լուսարձակ-ներ և այլն, —պարտաւթյունն են կը ում, յերբ միջոցներ են գործազրպում, թե նրանց կեն-դանին ի ուժի գեմ և թէ մեքանի զու-ները ի ուժ ապարատների գեմ և նա-մակն հարվածվելու համար պահանջվում են հա-

տուկ հրանոթներ ու արկեր (գենիթի թնդանոթ, տանկերի դեմ զործող թնդանոթներ, սավառնակների դեմ արկեր):

Բացի անմիջական զործողության արկերից, ինչպիսին են կարտեչի զործողության (շրալներ, բրիգանտական նոնակ), ֆուգասին, ծակող-անցնող (զրահահար) քիմիական արկերից, մարտական խնդիրներն առաջարկում են կողմնակի զործողության արկեր զործադիրելու անհրաժեշտությունը, ինչպես որինակ՝ հրձիկ, լուսատու, քողարկության կողմէ:

Մերյալ նշանների գեմ զործելու համար նշանակված արկերն աջողությամբ կարող են գործել նաև կհնդանի նշանների դեմ, բայց գլխավորապես բարոյական ազդեցության միջոցով:

Հրանոթային սիստեմի միջնույն քաշի ժամանակ, վոր վորշում են նրանով, թե ինչ աստիճանի զյուրաշարժություն ե պահանջվում, նրանութիւնամեծ տեխնիկական հզորությունը կարելի յեւ ամենից ձեռնուու ձեռվիրազործել յերկու կերպ. կամ արկին կարելի յեւ տալ փոքր քաշ սկզբնական մեծ արագությունը կամ ծանրագույն արկին (պայ-

թուցիկ յեծ լիցքով) տալ համեմատաբար փոքր արագությունն Առաջին տեսակի հրանոթները, որինակ՝ թնդանոթները (գետնամերձ) հետագիծ են տալիս, յերկրորդ տեսակի հրանոթները, — հոքից ներն ու հրասանդները տալիս են ուղղորդ հետազիծ: Վորովինեան մարտական տարբեր նպատակները պահանջում են թե՛ առաջին և թե՛ մյուս տեսակի հետազծեր ու արկեր, ուստի հրետանու բոլոր տեսակների միջնական հրամանը կամ հոքիցներ կամ հրասանդները:

5. Հրետանու շարժունակությունը նրա հիմնական մարտական հատկությունն ե կազմում և նրան ընդունակ ե դարձնում պահանջված բոլոր երեսներ մարտագալաքանչ պահանջվում են թնդանոթներ կամ կամ հրասանդների միասին տեղափոխել, առանց նրանցից յետ մնալու և դուրս գալու ժամանակության շնորհիվ հրետանին կարողանում ե զորքերի այլ տեսակների հետ միասին տեղափոխել, առանց նրանցից յետ մնալու և դուրս գալու ժամանակության շնորհիվ հրետանին ողտում ե կենդանի շարժիչներով և սովորական ձանապարհներով (կամությներով), այդ դեպքում նրա շարժունակությունը նը զգալի:

չափով վորոշվում ե սիստեմի քաշով. որտեղ մինույն ժամանակ սահմանակ առ հման ափ ակած գում ե նաև նրա հզորությունը:

Յերբ հրանոթային սիստեմերն այնպիսի կառուցվածքներ ունեն, վոր կարող են մասերի բաժանվել, յերբ փոխադրության համար մեքենայական ուժ ե գործադրվում, և յերբ ոգու վում են ժամանակվոր (նեղ կամ լայն գծանի) յերկաթուղիներով, այն ժամանակ այդ սահմանափակումը զգալի չափով նվազում է:

6. Հեեւանու զանազան տեսակներ: Տեսակները սիստեմ կա ական տեսակետից ընդունված ե հրեանին բաժանել նրա շարժունակության առաջնի նաև եմատ:

Ծնորհիվ այն հանգամանքի, վոր նրա փոխադրության համար միայն մոտ ժամանակներու են սկսել գործադրել մեքենայական ուժ և հաղորդակցության արհեստական ձանապարհներ, գեռ հաստատուն ձեռվ վորոշված չենք վորակավորումը, բայց զլխավոր գծերով չարելի յեւ մատնանշել հետեւալը:

7. Անդիանուր զործողության նրեւանի:

Ա. Զորական հրեսանի, վոր շարժվում ամեն տեսակի ձանապարհներով (տեղանքով)

զորքերի այլ տեսակների հետ միասին. կա գումար կը չունի մատնում ե զորքական օրիավորությունների մեջ (նախկին դաշտային):

Երա ստորաբաժանությունները.

ա) Փոխադրելի, — վոր փոխադրվում է ձիերով, բայց կարող ե տարգել նաև մարդկանց միջոցով. նշանակվում է հետեւակի հետ մերձակոր մարտում գործելու համար, մասնավորապես (խրամատային) — հետեւակին ուղեկցող հրաձգային:

բ) Գրասատավոր, և գրասատավորձիալ (¹) — (նախկին լեռնային) — նշանակվում է հետեւակի ու հեծելազորի հետ միասին այնպիսի աեղանքում, վոր մատչելի չե անիվներով շարժվելու համար (մասնավորապես լեռնոտ վայրերում):

գ) Հեծալ — հեծելազորի հետ գործելու համար, փոխադրվում է լծված, տրակտորներով կամ ինքնաշարժ ե:

դ) Թեթև հեծեւակի հետ գործելու համար, փոխադրվում է լծված տրակտորներով կամ ինքնաշարժ ե:

ե) Ծանր — փոխադրվում է լծված տրակտորներով կամ ինքնաշամբ ե:

¹⁾ Անիվներով շարժվելու ժամանակ հրանոթի ամբողջ կազմը ձիով ե:

Բ. Խճռւղային—շարժվում եւ միայն
խճռւղիներով (ամուր կամուքներ) զիսավորա-
պես մեծ տրամաչափի հրանոթներ են. տրվում
եւ գորական խռովը միավորու-
թուններին էատուկ խնդիրներ
լուծելու համար (նախկին պաշարողական):

Գ. Յերկաթուղային—շարժումն աւ
հրածգությունը կատարում եւ յեր-
կաթուղային տամալներից (ամեն
տեսակի տրամաչափի յելինում). սահմանավակ
գործադրություն ունի յերկաթուղիների շրջա-
նում, ընդունակ եւ պաշտպանելու ծովագերբ:

Դ. Դիրքային—մշտական հաստարան-
ունի, հարմարեցրած չե փոխադրությունների
համար, փոխադրվում եւ միայն յերկաթուղի-
ներով (փորպես բեռ). հրածգությունը
կատարվում եւ հատուկ կառուց-
գած հիմքից (հաստարանից), (նախկին պա-
շարողական և ամրոցային):

Ե.—Յերդային—անշարժ եւ, նշանակ-
վում եւ բերդային պաշտպանության
հատուկ խնդիրների համար (որինակ՝ հա-
կագուռթային, աշտարակային):

Զ. Ծովափնյա—ոմբոցային հրետանու-
մասնավոր տեսակն եւ ծովափնյա ամրոցներում:

Ա. Հատուկ զործողության հրետանի.

Ա. Զենիթի հրետանի. ա) զորական,
բ) խճռւղային, գ) յերկաթուղային և դ) տեղա-
կան:

Բ. Զըանապատը—զըանի ակտիվ
գեր ունեցող. ա) զորական հրետանի. զըա-
նապատ մերենաներ և թեթև տանկեր, բ) զիր-
քային հրետանի—ծանր տանկեր և գ) յեր-
շկաթուղային—զըանապատ գնացքներ:

Գ. Ականանետային—ուժեղ և
լինավորապես մերձագործ ֆուկասային և
ըիմիական գործողության համար. ա) զորական.
թեթև ու ծանր և բ) զիրքային (խրամատային):

Դ. Մբանետայի մերձագործ
գործողության համար (խրամատային):

Է. Ված հրատանու ատկ հասկաց-
վում եւ այն հրետանին, վոր փոխադրվում է լը-
ծած ձիերով (1-ից մինչև 10). տը ակտոր-
ներով փոխադրվող հրետանու տակ, վոր փո-
խադրվում եւ մերենայական շարժիչով (շար-
ժիչի հետ շղթայված), ինքնաշորժի ատկ,
վոր հաստատված եւ կրակում եւ հենց իրեն
շարժիչի (շարժող մերենայի) վրա:

Հրետանու համարյա բոլոր տեսակները կա-

ԱԵՐ ՀՐԵՏԱՆԻՒ ԳԼԽԱՎՈՐ ՀՐԱՄԱԹԵՆԵՐԻ ԹՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՀՐԱՄԱՆՈԹՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐՆ ՈՒ- ՏՐԱՄՄԱՉԵՐՆ ԲՈՒ- ՔՆԵՐՆ ԱՌԱՋԱԿԱ- ՐԱՐ	Արդարի քայլեցու մասին պատճենի փուն- թերութիւնը թերութիւնը դիրքորոշումը ներութիւնը	Արդարի քայլեցու մասին (առաջակարգ պատճենի փուն- թերութիւնը վեց մասնաւութիւնը գույքական հարաբեկութիւնը)	Արդարի քայլեցու մասին պատճենի փուն- թերութիւնը գույքական հարաբեկութիւնը	Արդարի քայլեցու մասին պատճենի փուն- թերութիւնը գույքական հարաբեկութիւնը
Բարեկարգի 37 միլիոնի մետրանոց (1.5 մասնի) թերութիւնը.	11 — 180	1.25 0.50 2.75	75 0.017 1.13 կարսեց	1.17 0.45 —
Մակարանի 37 միլիոնի. (1.5 մասնի) թերութիւնը (ավագանաւութիւն).	15.5 — 244 5ամբուժ համար	— 0.043 —	— 14 մակարանի կարսեց	1500 3200 —
Զագլուհու 47 միլիոնի. (1.85 մասնի.) թերութիւնը.	59 966	3.70 1.50	— 14 մակարանի կարսեց	2500 5334 (առաջինի գույքական հարաբեկութիւնը) —
			100 213 կարսեց	1500 3200 —
				1450 318.5 —

5	6	7	8	9
3 մասնաչ. (75.2 մմ.) ինստինք թերութիւնը 1909 թվականի մի դաշտի.	75 1228 6.4	15.65 1228 6.4	240 7040	1.92 0.78
3 մասնաչ. (76.2 մմ.) 900 լի 902 թվ. տիպարի.	124 2031	15.65 6.4	260 0.78	1.92 3900
48 գծանի (122 մմ.) հա- րեց (թերութիւն 900 լի 910 թ. տիպարի.	145 2375	56 23	480 4.7	11.5 7680
45 գծանի (113.3 մմ.) հարեց (թերութիւն առաջիւ- ղանի).	130 2129	38.75 15.9	— 480	6.5 3129
42 գծանի (106.7 մմ.) թերութիւնը (ձանը) 910 թ. տիպարի.	154 2523	40 16.4	600 1.86	4.54 10468
6 մասնաչ. (152.4 մմ.) հարեց (ձանը) 909 թ. յին 910 թիւ առաջիւղանի.	154 2523	100 40.9	690 8.8	21.5 7680
թերութիւնը առաջիւղանի. 3 մասնաչ. (75.2 մմ.) թերութիւնը 14 լի 15 թվ. առաջիւղանի (առաջիւ- ղանի գլուխութիւնը).	187 3096	100 40.9	690 8.8	21.5 8748
				4100 1200
				335 366
				4 առաջիւղան առաջիւղանի գլուխութիւնը.
				1930 1930
				579 5530
				1100 335
				1200 366
				2 2
				4000 5530
				15 588

բող են ունենալ և թնդանոթներ և հոքիցներ
(կամ հրասանդներ):

Հրետանու հիշյալ բոլոր հրանոթներով (բա-
ցի զենիթի Յ մատնաչափի հրանոթից) զինված-
են զորական կազմակերպչական միավորություն-
ների մեջ մասող մարտկոցները. միևնույն ժա-
մանակ.

ա) Թողենքերգի և Մակենի
37 մմ. թնդանոթները ու գոչիսի 47
միլիմ. թնդանոթը ժամանակավորապես գոր-
ծադրվում էն, վորպես հըաձգային (գնդի)
հրետանի:

բ) Յ մատնաչափի թեթև ու
լեռնային թնդանոթներն ու 48 և
45 դժանի հոբեցները գործադրվում են.
իբրև դիվիզիական — զիվիզիայի կազմի
մեջ մասող հրետանի:

գ) 42 դժանի թնդանոթը և 6
մատնաչափի հոբեցը գործադրվում են,
վորպես դորամարմնի (կորպուսի) հրետանի:

Բացի ազյուսակում հիշատակվածներից,
կան զանազան հրանոթներ ու զենիթի հրետանի,
զորոնցով զինված են հատուկ դեր ունե-
ցող հըետանու (ՀՖՀ—АОՀ) կուզմի մեջ
մասող մարտկոցները: Դրան վերաբերող ավյալ-
ները հրապարակման յենթակա չեն: Այդ հըե-

տանիքն անհրաժեշտության դեպքում արվում ե
ֆանակներին և զորական միավորությունների
առանձին խմբակներին:

Բոլոր տեսակների զըահապատ հըե-
տանին առանձին հաստիքավոր մասեր են
կազմում, վորոնք արվում են զորական միավո-
րություններին անհրաժեշտության դեպքում:

7. Զանազան տեսակի հրետանու դերը.

ա) Մանը տրամաչափի փոխադրելի
Քրածգային հրետանին զործում ե հետևակին
աջակցելու համար, մոտավոր տարածություն-
ներից, մարտի այն շրջաններում, յերբ վոչ մի
այլ հըետանի այգ աջակցությունը
ցույց տալ չի կարող. գոռույթի ու
նրա զարգացման ժամանակ և առաջավոր
մասերում հակառակորդին հանդիպելու ժա-
մանակ: Դրա համար նշաններ են ծառայում.
Գնդացրերը, տանկերը, թեթև ծածկաբանները,
հակառակորդի մասը խմբակները:

բ) Թեթև ու հեծյալ հըետանու.

1) Յ մատնաչափի թնդանոթներ—ծառայում են
հետեյալ նպատակների գեմ զործելու համար.
Պաց կամ թեթև ծածկաբանի յետեից գործող
կենդանի հակառակորդի գեմ, գնդացրերի, հրե-
տանու, տանկերի, զրահապատ մեքենաների,

զրահապատ գնացքների, արհեստական արգելքների (լարափակոցների) դեմ. թեթև ծածկաբաններ ավերելու համար, Սավառնակների դեմ կովելու համար (համապատասխան հարժարանքներ յեղած գեպքում): Կրակի պատճեց ստեղծելու համար, քիմիական, հրածիգ, քողարկող և ազիտացիոն արկերով հրածգության համար:

2) 3 մատնաչափի գրասառավոր հրետանու նշանները նույնն են, ինչ վոր Յմատնաշափի թեթև թնդանոթի նշանները, լեռնային պատերազմի պայմաններում կամ այնպիսի տեղանքում, վոր մատչելի չե անիվներով շարժման համար:

3) 48 և 45 գծանի հորիցները ծառայում են խրամատներ, շերտափակեր (բըլինդաժներ) և գաշտային տիպարի հենակեաեր ավերելու և հրետանու դեմ գործելու համար (յեթե ավերելու յենթակա այլ նպատակներ չկան): Ուղղորդ լանջեր սմբակոծելու համար կենդանի նշանների չեմ, — յեթե հնարագոր չե նրանց հարվածել թնդանոթներից, (Փուգառային ուռմբերը բարոյական ուժեղ ազդեցություն ունեն). քիմիական և լուսատու արկերով հրածգության համար:

4) Ծանոթ հրետանու. 1) 42 գծա-

նի թնդանոթներ—ծառայում են հրետանու և պարանավոր ողապարի կների դեմ գործելու համար. խոշոր նշանակություն ունեցող հեռավոր նշաններ (շտաբներ, խոշոր զորայուններ, ճանապարհների հանգույցներ և այլն) ուժակոծելու համար, կամ հեռավորությունը մարտավարական նպատակներով ոգտագործելու համար (հակառակորդին կանգնեցնել, ստիպել նրան բացազատիլ):

2) 6 մատնաչափի հորիցներ—ծառայում են ամօւր կառուցվածքներ (շերտափակեր, խրամատներ) ավերելու համար, վորոնք թեթև հոբիցների համար մատչելի չեն և ընդհանրապես ամրաշինական կառուցվածքների դեմ կրակելու համար. հրետանու դեմ գործելու համար (յեթե ազատ ե այլ խնդիրներից). քիմիական արկերով հրածգության համար:

դ) Զենիթի ամեն տեսակի ոգալին նշանների դեմ գործելու համար:

ե) Հատուկ գերունեցող հրետանու խոշոր արտմաչափի հրետանի. թնդանոթներ—հրետանու դեմ գործելու համար, հոբիցներ—այնպիսի ամուր կառուցվածքների դեմ գործելու համար, վորոնք մատչելի չեն զորական թեթև և ծանր հոբիցների համար:

8. Նարձման արագությունը.

Քայլով—մի ժամում 5 վերստ, վարդելով 5 ըոպեյում 1 վերստ (բայց անընդհատ դնալիս 3 վերստից վոչ ավելի), արշավակի (ծանր հրետանին չունի արշավ) 4 ըոպեյում մի վերստ, փոփոխական քայլով—մի ժամում 7-8 վերստ: Դաշտային հեծյալ հրետանու համար արշավը $\frac{2}{3}$ վերստ և մի ըոպեյում: Հետևակի հետ միտաեղ շարժումը հոգնեցուցիչ ե. ցանկալի յե հրետանին ուղարկել առանձին սյունով, ավելի լավ ճանապարհով: Յ երկարաւան գնացքներն ավելի շուտ են կատարվում դանդաղ շարժումով:

9. Նարքեր ու կարգեր, Յուրաքանչյուր մարտկոց բաժանվում ե մարտամասի, մարտկոցի սժանդակի և դումակի: Մարտամատում գտնվուա են բոլոր հրանոթները, մի մի ոմբասայլ յուրաքանչյուր հրանոթի համար և կապի խումբը: Մարտկոցի սժանդակը կազմուա են մնացած ոմբասայլերը և դումակը (յերկու յերկծի սայլ գործիքներով, ուղղմատնաեւական սայլերը, յերթի խոհանոցը, ջրեռոցը):

ա) Շարժման համար:

Մաս.	Յուրաքանած շաբաթ.	Զամփը քայլելով ճակակով	Գործողությունը.
Մարտ- կոց.		112×86	Կրակի տակ շարժվելու և դրբերը դուրս դալու համար, կենաքոնացած գա- սավորության համար:
	Հրանոթային սյուն, ոմբա- սայլերը հրա- նոթների յե- տից:	3×625	Կրակից դուրս և կրակի տակ տեղափոխվելու հա- մար, յերթական շարժում- ների համար, յերբ ուղմ- բասայլերը հրանոթների կողքին են գտնվում դիր- քերը դուրս դալու համար:
	Բմբանոյեցը հրանոթների կողքին երայլ միջանցի դրաւ:	10×274	
Բաժ- նյակ.	Յուրաքանած շաբաթ.	551×86	Բաց կերպով դիրքերը դուրս դալու համար:
Բաժ- նյակ.	Հրանոթային սյուների գիծ.	96×625 (274)	Կրակի տակ տեղափո- խություններ կատարելու համար:
	Հրանոթային սյուն.	3×2590 (1186)	Յերթական շարժման համար:

Ոժանդակային կարգի շարվածքի համար,
նայած տեղանքին, գործազրվում ե վերոհիշյալ
շարքերից մեկն ու մեկը:

բ) Մարտի համար. մարտկոցը բաղ-

կացած ե գիրքերում զտնվող մարտաժասից՝ քարշակներից և մարտկոցային ոժանդակից՝ Դիրքերում մարտկոցները զտնվում են արկղ-սալերի յետքերի հետ միասին. հրանոթների միջև 30 քայլ ե. ընդամենը ճակատի յերկարությունը 100 քայլ ե. Մարտաժասի քարշակներն ու մարտկոցային ոժանդակը տեղափորփում են թաքնված այնպիսի տեղում, վորմարտկոցի հետ արագ ու հարմար հաղորդակցության հնարավորություն ունենան:

Բաժնյակը մարտակարգում բաղկացած է մարտկոցների մարտակարգերից, մարտաժասի քարշակները տեղափորփում են մարտկոց առ մարտկոց։ Մարտկոցային ոժանդակները յերբեմն միացվում են, յերբեմն անջատ են տեղափորփում, շարաններով գեպի խորքը դասավորված, ճանապարհներից դուրս։

ՀՐԵՑԱՆՈՒԻ ԿՐԱԿԸ

10. ա) Արկերի զրծողությունը. 3 մատուն աչափելի թնդանոթային շրապնել զորս - հրանոթանոց մարտկոցի ձիգերի հերթը (սերիան) նշանոցային հարմարանքների ու փողակի միատեսակ գրությամբ հարվածում ե մոտավորապես հավասարաշափ կերպով 120 քայլ ճակատով և 180 քայլ (նշանոցի 3 խաղ) խորությամբ։

4-5 գերստի վրա կրակը թռյլ է, 4 գերստից կրակը գործոն է, 200 սաժենից - կարտեշային ե։ Նայած հեռակայության և նշանների սմբակոծման տարածության չափերին, շրապնելի հերթերից լուրաքանչյուրը հարվածելիության հետեւյալ տոկոսն է հասցնում (յերբ հարվածում է 120×180 մակերես):

ԵՇԱՆԵՐ,	Մինչև նշանները յեղած հեռագրությունները սաժեններով				
	500	1000	1500	2000	2500
Հեծելազոր	60	45	36	28	20
Կանգնած կամ շարժվող հետեւկ	22	17	13	10	7
Մինչեւ գոտկառեղերը պատվարով ծածկված կամ չորած հրացանաձիգներ	16	12	9	7	4,5
Պանկած հրացանաձիգներ	13	9	7	5	3,5
Պատվարի հետեւկ կրակող հրացանաձիգներ	3	2	1	0,75	0,5

Պինդ գետնում վոստոստյունների հետեւանըով հարվածելիությունն ավելանում է։

Երապնելի գործողությունը նվազում է,

յերբ նշանները ոմքակօծվում էն այնպիսի տեղանքում, վորի լանջի թեքությունը դարձված է գեղի մարտկոցը, և ավելանում է, յերբ նշանները հակառակ լանջի վրա յեն տեղափորված, յեթե լանջի ուղղորդությունը 18°-ից ավելի չե 5 վերստ հեռակայության վրա, 12°-ից ավելի չե 4 վերստ հեռակայության, 8°-ից — 3 վերստ, 4°-ից — յերկու վերստ և 2°-ից — 1 վերստ հեռակայության վրա:

Հրածգությունը կատարվում է հեռակայության ձիգերով, յերբ բաց կենդանի նշաններ են ոմքակոծվում: Յերբ հոնակներ չկան թույլատրվում ե շրապնելային հրածգություն հարվածային ձիգերով կենդանի նշանների դեմ, վորոնք պաշտպանված են այնպիսի թաքսուոյներով, յերբ այդ թաքսուոցները շրապնելի գնդակները չեն ծակում կամ, յերբ հրածգությունը կատարվում է այնպիսի հեռավորության վրա, վորն ավելի յե հեռակայության փողակի հասողությունից (գործողությունը թույլ ե): Խրամատներում գտնվող զորքերի դեմ առանձնապես կործանիչ ե թևային կրակը:

3 մատնաչափի քենդանօքային նունակ (ՏՐՈՆԺԻԲ):

Մահաբեր մակերեսը՝ պայթյունի կետից 5 սաժեն շառավիղով շրջադիմն ե — հարվածող

կտորտանքների թիվը մոտ 200 ե: Զիգերի խըմքակների ժամանակ հարվածելի տարածությունը ճակատով մոտ 40 սաժեն ե, խորությամբ 5 սաժեն: Ավելում ե աղյուսավոր պատեր արշին հաստությամբ, գրանիտի և լեռքարի դեմ գործողությունը չնշին ե: Միջակ գետնի մեջ գոյացրած ձագարի խոտոքնակը՝ 5 վոտնաշափի ե, խորությունը 2 վոտնաշափի:

Շնորհիվ նրան, վոր հարվածելիության մակերեսը համեմատած մարտկոց ային ցրման հետ փոքր ե, հուսալի հարվածելիության համար պահանջվում է յուրաքանչյուր հրանոթից փորձնական հրածգություն կատարել, գիտելով յուրաքանչյուր ձիգը մոտ տարածությունից փողակի ողնությամբ, մանավանդ: յերբ հրածգությունը կատարվում է լարափակոցների դեմ: Հարվածելիության համար արկերի մեծ ծախք ե պահանջում: Նշանակվում է քարից ու փայտից պատրաստած շինություններ և հողից շինած թեթև կառուցվածքներ ավերելու, զյուղերի, անտառային տեղամասերի, հրետանու, լարափակոցների դեմ գործելու համար այնպիսի հեռակայությունից, վոր շրապնելի կրակի հասողությունից ավելի յե բարոյական մեծ ագդեցություն և ունենում:

48 գ ծ ա ն ի հ ո բ ի ց ի շ ր ա պ ն ե լ ը:
Զօրս-հրանոթանոց մարտկոցի շրապնելների

հերթը հարվածում ե 120 քայլ ճակատով և 90 քայլ խորությամբ մակերես։ Գործազրվում ե ռմբակոծելու համար քաց տեղափորված դորքերը լրիվ լիցքով և ծածկված տեղափորված դորքերը պակասեցրած լիցքով։ Ծառայում ե այնպիսի զորքեր հարվածելու համար, վորոնք ծածկված են բարձունքների լանջերով, հեղեղատների ափերով, պատվարներով, վահաններով։

48 գծանի հոբիցի ոռումը (տը ոտիլի)։ Մեկ ձիգի կտորտանքների զործողության շառավիզը մոտ 10 սաժեն է։ Մարտկոցը կտորտանքներով հարվածում ե 80 սաժեն ձակատով և 10 սաժեն խորությամբ մակերես։ Զագարի խոտորնակը 13 վորտնաչափ ե և խորությունը 4 վորտնաչափ. ավերում ե 5 վորտնաչափի հաստության հողակույտ ունեցող բլինդաժները. յերբ անկման անկյունը 45° պակաս չե, ավերում ե 2 վորտնաչափի հաստության աղյուսի կամարը. լարափակոցների գեմ դործելիս ավերածության մակերեսը մոտ $1\frac{1}{2}$ սաժեն ե. դործազրվում ե թաքստոցներ ավերելու համար. լավ ե զործում հրետանու դեմ. բարոյական ուժեղ ազդեցություն ե ունենում. Պահանջում ե յուաքանչյուր հրանոթի ճիշտ փորձնական հրածգություն։

42 գծանի թնդանոթի նոնակ (տը ոտիլի)։ Ավերում ե գրանիտե պարիսպաներ. Փուգասային գործողությունը չնշին ե. բայց 3 մատնաչափի թնդանոթի գործողությունից ուժեղ ե. լավ ե զործում հրետանու դեմ։

Այդ թնդանոթի շը ապնելը զործադրը վորտներ ափերու տարածությունից կրակելու և մատնավորապես թշնամու հրետանին ու պարանավոր ողապարիկներ ռմբակոծելու համար։

6 մատնաչափի հոբիցի ոռումը (տը ոտիլի) ձագար ե առաջացնում 16 վորտնաչափի խոտորնակով և 6 վորտնաչափ խորությամբ, ավերում ե մինչև 8 վորտնաչափ հաստության հողակույտ ունեցող բլինդաժներ. ծակում ե մինչև 3 վորտնաչափի կամարներ. լարափակոցների գեմ գործելիս ավերման մակերեսը զայնությունը 3 սաժեն ե։ Յուրաքանչյուր. հրանոթի համար փորձնական հրածգություն ե պահանջվում։

3 գծանի քիմիական արկ։ Հրածգությունը լավ հետեանքներ ե տալիս կուտակության տեսակետից մինչև $4\frac{1}{2}$ վերստ տարածության վրա։ Կարող ե լցված լինել զանազան քիմիական նյութերով. արագ կամ դանդաղ

թունավորող, հեղձուցիչ, արտասվաբեր, փոշառցընող պալարներ առաջացնող նյութերով:

Գործողության շրջանը չափազանց սահմանափակ է, ուստի ճիշտ փորձնական հրածություն և պահանջում: Գաղը 250 սաժենից ավելի չի տարածվում: Դ մետրից ավելի ուժեղ քամու ժամանակ (բացի մշտական քամուց) գործոն չե:

Քիմիական ծխառու արկերը քարկող գործողություն են կատարում (դիտակետեր, հակառակորդի հրետանի):

6 մատնաչափանոց քիմիական արկը նման հատկություններ ունի:

Հըձիգ, լուսառու և ագիտացիոն արկերը գործադրվում են իրենց կոչման համաձայն:

բ) Կրակ վարելը: Հրետանային կրակի հեռակայությունները (հիմք ընդունելով 3 մատնաչափի թնդանոթը):

Հեռավոր տարածության (2500 սաժ. և ավելի) գործողությունը թույլ է. խնդիրը լուծելու համար յերկար ժամանակ և շատ փամփուշտ և պահանջում:

Միջակ հեռակայություն — մոտ 1500 սաժեն (1000 - 2500) — ամենաձեռնուու հեռակայությունն և հրետանային կրակի հա-

մար, գործողությունը լավ է կարճ ժամանակի ընթացքում փամփուշաներ ըիչ բանեցնելով:

Փոքը հեռակայություն. 1000—250 սաժեն կրակի գործողությունն ավելի մեծ է, քան սիջակ հեռակայությունները, բայց գործողությունները ճնշվում են հակառակորդի գնդացրային ու հրացանային կրակով:

Վահանգավոր մոտիկություն. 250—5 սաժեն, կարտեչի կրակ. հարվածում և ամենատեսակի կենդանի նշաններ, բայց կրակող հրետանին, նույնիսկ վահան ունեցողը, կարող է արագ վաչնչանալ թշնամու գնդացրային և հրացանային կրակով:

2) Նեանիների ընթացքունքը.

Առանց վորոշ նշանի կատարած հրաձը գությունը վոճրագործությունն է: Նշանն ընտրվում է անպայման վորոշ մաքարական խնդիրը լուծելու համար և այն եւ այնպիսի նշաններ են ընտրվում, վորոնք տվյալ բառեյում խոչընդուռ են հանդիսանում այդ խնդիրի լուծմանը. մերձեցման սկզբում նշաններ են հանդիսանում հակառակորդի հրետանին, ապա նվազնդացիքիները, հետեակի մասերը, վորոնք հրացանային կրակ են մզում, այնուհետեւ գրոհի

համար նշանակած տեղամասը և ամբողջ ժամանակ հրետանին, քանի նա խանգարում է մեր հետեւակին:

Առաջին հերթին՝ հարվածում է կենդանի նշանները: Տեղանքի մի կետի, մի բնագծի դեմ հրաձգությունը հնարավոր և միայն հրաձգության համար ճիշտ տվյալներ փորունելու համար:

3) Արդի ընտրությունը: Կենդանի, բաց տեղափորփած նշանների դեմ՝ ընտրվում է շրապնելը, ծածկփածների դեմ՝ նոնակը, ոռումբը, քիմիական արկղը և շրապնելը (հակառակորդին ձնշելու համար). մեռյալ նշանների դեմ գործադրվում է նոնակն ու ոռումբը. կարտեզով շրապնելն անհրաժեշտ է ինքնապաշտպանության և հարվածը յետ մղելու ժամանակ. ողային նշանների դեմ՝ յեթե հատուկ արկ չկա՝ գործադրվում է հեռակայության փողակով նըռնակ, յեթե այդպիսի նոնակ չկա՝ շրապնել:

4) Հրածգություն. I. Փորձնահրածգություն. ա) դեպի նշանը ձիգերի ուղղություն փորունելը (ծածկփած զիրքերից), բ) հեռավորություն փորունելը (պահանջած լայնությամբ ճանկ 5—10 խազով կենդանի նշանների, և 2—3 խազով մեռյալ նշանների դեմ), գ) հեռակայության փողակի հաստումը (շրապնելով

կրակելու ժամանակ), և դ) ձիգերի բաշխումը ճակատով նշանի լայնության համեմատ (զուգահեռաշար հովհար): Առանց փորձնահրածգության ոմբակածումն ապարդյուն է, բայց անհրաժեշտ է շտագ հարվածականության անցնել: Ճիշտ քարտեզ, տվյալներ մթնոլորտի զրության ժամանակին, տվյալներ այն վասովի և արկերի առանձնահատկությունների վերաբերյալ, փորոնցով կատարվում է հրածգությունը, լիցքերի ջերմության, հրանոթների անհատական զարկի և համապատասխան աղյուսակներ ունենալու դեպքում, փորձնահրածգությունը զգալիորեն կարող է կրծատվել և նույնիսկ կարող է բոլորովին վերացվել նախնական հաշվարքներով: Մեռյալ նշանների դեմ գործած հրածգության ժամանակ պահանջվում է ճիշտ (յուրաքանչյուր հրանոթից առանձին) փորձնական հրածգություն կատարել և շարունակ ուղղումներ անել ձիգերի հետագա խմբերի դիտողությունների հիման վրա, վրոնք արձակվում են նախկին հաստումներով: Փորձնական հրածգության տվյալները փոխվում են ժամանակի ընթացքում, յերբ փոխվում են մթնոլորտի դրությունը և վառողի ու արկերի նոր պաշար ստանալու դեպքում, ուստի այն նշանների դեմ կրակելիս, փորոնց վերաբերմամբ փորձնահրածգություն է կատար-

ված անհրաժեշտ ե ստուգել և ճշտել այդ նը-
շանների, կամ ընտրած կետի ու ընազդի նոր
փորձնական հրաձգության կամ նոր հաշվարքի
տվյալներով:

Ա. Հրաժարական հարգած ելուն
Նպատակ ու վ. կենդանի բաց նշանի դեմ կա-
տարգում ե մակերեսի արագ ոմբակոծություն,
վոր փորոշիում ե փորձնական կողիտ հրաձգու-
թյամբ (5—10 խաղ), մի շարք հերթերով, 1—2
փամփշտի շտապ կրակով (մրրկալին կրակով)
ամեն մի 2—3 խաղից. մեռյալ նշանի դեմ, կրա-
կի պատճեշով, հրաձգությունը կատարվում ե մի
նշանոցով, փորով խնամքով կատարված ե փորձ-
նահրաձգությունը (յեթե նոր յնիսկ հրանոթ առ
հրանոթ ե կատարված):

Յերկարատես հարգածելի հրաձգության ժա-
մանակ առանձնապես անհրաժեշտ ե ուղղուժ-
ներ կատարել, յեթե ժամանակի ընթացքում
փորձնահրաձգության տվյալները փոխվում են,

գ) Կրակի տեսակները. 1) ուղղության
վերաբերյալ (նշանի ճակատի նկատմամբ).
Ճակատային, թեային, շեղ նշանոցային, զրոհը
յետ մղելու համար փաղորոք կատարած կադ-
մակերպության ժամանակ—թեվահար. 2) որկը
տեսակի վերաբերյալ՝ շրապնելի, նոնա-
կային (ոռոմային) քիմիական, խառը (միաժա-

ժամանակ զանազան արկերով), հատուկ արկերով
(լուսատու, հրձիգ ազիտացիոն), 3) պայթյուն.
Ների տեսակների վերաբերյալ հարցածային, հեռակայության (մասնավորապես կար-
տեչի). կրակ մղելու կարգի տեսակետից. մենա-
զարկ (հրանոթային), խմբակային (ժարտկացնե-
քի դաստիճների, երթերով) շտապ կրակ (առանց
հերթի, յուրաքանչյուր հրանոթի նընթացույն կեր-
պով). 4) ընդհանուր արագության տե-
սակետից — դանդաղ, ժամանակի ընդիմիջում-
ներ նշանակելով ձիգերի միջև, արագ-նվազա-
գույն ընդմիջումներով, փորպիսի արագություն
թաւը են տալիս հրանոթները պահպանելու պայ-
մանները (յերկարատես հրածգության ժամանակ), մրրկալին—ամենամեծ արագությամբ,
յուրաքանչյուր հրանոթի կողմից ինքնուրույն
կերպով (միայն կարճատես ժամանակամիջունե-
քով): Սրան կը բեկի յե վերաբերել նաև մեթո-
զական կրակը, —յերբ յուրաքանչյուր հաջորդ
ձիզն արձակվում ե ժամանակներին զիտողությու-
նեց և նախընթաց ձիզի գնահատությունից հե-
տո. 5) մարտավարական նշանակություն տե-
սակետ տեսակետից. կենտրոնացրած (ժամ-
այացրած) կրակը —յերբ ոմբակոծվում ե վո-
րոշ տեղամաս, նրա վրա գտնված նշանների ա-
ռավելագույն հարգածելիության համար: Այս

(կենտրոնացրած) բառի տակ հարկավոր ե տարբերել տեխնիկական կենտրոնացումը — յերկու (յերեք) մարտկոց մի նշանի դեմ, յերբ հրաձգությունն ուղղված ե հրետանու դեմ (որինակ՝ ճակատային և թեային կրակով), գազային ամպ ստեղծելու ժամանակ, յերբ միաժամանակ խրամատները ոմբակոծվում են ճակատային և թեային կրակով: Խափանիչ կրակ. անշարժ — յերբ անընդհատ կրակով ոմբակոծվում ե նշանադրված և փորձնահրամածգությամբ փորոշված շերտը, հակառակորդին այդ շերտն անցնելը խանգարելու համար և շարժական — յեթե նշան կը ըակը ժամանակի ընթացքում, կամ ցուցումների համաձայն փոխադրվում ե այլ շերտերի վըրա, նշանոցի և անկյունաչափի մեթոդական փոփոխություններով կամ փորձնահրամածգությամբ նախապես փորոշված տեղական առարկաներով: Պատճեշային կրակը, վոր մեծ լարվածություն և արկերի մեծ ծախու ե պահանջում, թույլատրվում ե սիայն կարճ ժամանակամիջոցներով հետեակի զործունեյության ամենապատասխանատու շրջաններում (դոութը նրա զարգացումը, գրոհը յետ մղելը):

Կրակը գաղարեցվում ե, յերբ նշաններ չըկան, յերբ խնդիրը լուծված ե, բողարկման նըպատակով, փամփուշաներ չունենալու դեպքում,

մեծ կորուստների ժամանակ (պետք ե դիրքերում մնալ):

Դ) Կրակի մարտավարական համկությունները հետեւալներն են. կրակի ուժը, ձկունությունը — զանազան ուղղությունների ու հեռավորությունների վրա գանվող նշաններ հարվածելու ընդունակությունը. կրակը բաշխելու ընդունակությունը համապատասխան նշանների մեջ (կետ, գիծ, մակերես), կրակի զեկավարվելը (կարգապահությունը). Նրբերանգների լնդունակությունը (ըստ ուժի և հրաձգության արագության):

Ե) Կրակի դեկավորությունը: Ընդհանուր գորական պետն առաջադրում ե խընդիրը, բայց խնդիրն իրագործելու մանրամասնությունների մեջ նա չի մտնում: Խնդրի իրագործումն ամբողջապես ընկնում ե հրետանային պետերի վրա:

Առեն տեսակի զորական միավորության հրետանու պետը միացնում ե հրետանային մասերի կրակի աշխատանքը, ապահովում ե կրակի զարգացումն իր ժամանակին կարեոր կետերում, կազմակերպում ե, յեթե, հարկավոր ե, կրակի կենտրոնացումը, հսկում ե, վոր հրետանու աշխատանքը համապատասխանի զորբերի պահանջներին, տեղեկացնում ե ընդհանուր

զորական պետին արդյունքների մասին:

Բաժնյակի հրամանատարը — վարում ե մարտավարական ղեկավարությունը, մատնանշում ե նշանները, ընդհանուր նպատակի տեղամասերն ու կարգը և նրանց դեմ կրակ մղելու յեղանակը, կրակ բանալու, վերսկսելու և դադարեցնելու ժամանակն ու կարգը, կրակի արագությունը, նրան ուժեղացնելն ու թուլացնել, յերբեմն արկի տեսակը, ընդհանուր կերպով զիտում ե հրաձգությունը և տեղեկացնում ե հետեանքների մասին: Իրավունք ունի կրակը տեղափոխել բաժնյակի տեղամասի սահմաններում, իսկ հատուկ գեպքերում նաև՝ այդ տեղամասից դուրս: Հրաձգության տեխնիկային միջամտում ե միայն սխալների գեպքում, կամ, յերբ անհրաժեշտ ե, ոգնել մարտկոցների հրամանատարներին:

Մարտկոցի հրամանատարը վարում է կրակի տեխնիկան: Իրավունք ունի ինքնուրույն կերպով տեղափոխելու հետեյալ գեպքերում: հակառակորդից պաշտպանվելու համար, վասնդավոր մոտիկության և հեծելազորի զրոհի ժամանակ, նույնպիսի գեպքերում հարեաններին աշակելու համար, զեկուցելով կրակի տեղափոխության մասին բաժնյակի հրամանատարին և մոտակա մարտում բաժնյակի հրամանատարի

հետ կապը խզվելու դեպքում: Բացի դրանից, իր պատասխանատվությամբ կրակը կարող ե տեղափոխել մարտի կարեսը վաղանցուկ մոժենաները ոգտագործելու համար, բացառությամբ զրոհին աշակելու և հակառակորդի հարվածը յետ մղելու ժամանակներից:

Հրետանային կրակը լավագույն հետեղանքներ ե տալիս, յերբ զեկավարությունը կենարունացած ե հրետանային ավագ պետի ձեռքում, այդ կենարունացումն այնքան ավելի լավ է իրազործվում, վորքան ավելի հուսալի յեկապը պետի և հրետանու մասերի միջև, ինչպես նաև կապը հրետանու մասերի ու հետեակի միջև (պաշտպանություն, վորոշ զերքի գրոհ): Հարկավոր ե աշխատել այդպիսի կենարունացում ստեղծել առանձնապես այն ժամանակը, յերբ հետզետե զարգանում ե մարտը, հաշտվելով, յերբ հրետանին վորքրաթիվ ե, վորոշ մարտկոցների մի քանի անգամ վերաստորադասությունների հետ, յեթե այդ մարտկոցները նշանակվում են հետեակի վորոշ մասերին աշակելու և հրետանային ընդհանուր խնդիրներ լուծելու համար (կոխվ հակառակորդի հրետանու դեմ): Դուռըթի ըռպեյին բնականաբար անհրաժեշտ ե մարտկոցների մի մասը տալ հետ ակի վարոշ մասերին:

11. Հիմնական պահանջն է՝ հնարավորություն լինի դրած և նիզիրը լավագույն ձեվով լուծելու։ Սրա հետեանքով պիտի մատնանշել մտադրություններն ու խնդիրները նվազագույն չափով նեղեռվ տեղափորման նկատմամբ, ուստի տեղափորման շրջանը (բայց վոչ թե զիրքերի ճիշտ տեղը) մատնանշվում ե միայն այն չափով, ինչ չափով հրետանու տեղափորումն արգելվ չի հանդիսանում ընդհանուր զորական խնդրի իրագործմանը. թույլատրվում ե տեղափորվել իրմարտական տեղամասից դուրս:

Խնդիրը ճիշտ կերպով դնելու համար ընդհանուր և հրետանային ողերի միջև լիակատար համաձայն ուժուն պություն պիտի լինի. հրետանային պետք հադրդարկից պիտի լինի ընդհանուր պետի մտագրություններին։

Նայած խնդրին վորոշվում է, թե ինչ գլխավոր պահանջներին պիտի բավարար են դիրքերը. ա) պիտի ունենան համապատասխան դիտակետեր (տեսածիր), բ) պիտի ունենան հարկ յեղած ճակատի ուղղություն, գ) հարկ յեղած հեռավորություն մինչև նշանները, դ) հորիզոնական

և ուղղաձիգ ուժը ակնծ և ե) աեղանքն, ըստ հնարավորության, պիտի ավելի լավ ոչտագործվի իբրև թաքստոց Յերկրորդ դակարան պահանջներն են. համապատասխան տարածություն ճակատով և խորությամբ, լավ գետին, հարմար մատուցներ, քարշակների ու մարտկոցային ոժանդակի համար լավ ծածկարաններ և բնական քողարկում ունենալը։

Տրամատի տեսակետից դիրքերը լինում են.

Ա. Ծածկած դիրքեր — մարտկոցը, նրա ձիգերի բռնկումները, նրանց առաջացը ծովին ու փոշին թշնամու աչքից ծածկված են տեղանքի անհարթություններով. անտառով, գյուղերով և այլն, վօրոնց բարձրագունությունը դիրքի վրա հակառակորդի դիտադրության գծի ուղղությամբ 4 սաժենից պակաս չպիտի լինի. Յերբ պակաս չափով ե ծածկված, միայն քողարկված դիրքերուն ե լինել. Դիրքերից գեպի մի կողմն անհրաժեշտ ե դիտակետ ունենալ։

Արժանիքներն են. ա) դժվարացնում են հակառակորդի համար հետախուզությունը, բ) հրետանուն հնարավորություն են տալիս տեղանքից անկախ լինելու, գ) թույլ են տալիս հանկարծակի գործելու, դ) ավելի թույլ

հրետանուն հնարավորություն են տալիս կովելու
ավելի ուժից հրետանու հետ, ե) հնարավորու-
թյուն են տալիս հանգիստ ու հուսափ կերպով
աշխատելու, զ) նեշտացնում են դիրքերի զրա-
վումը, փոփոխելը ու մատակարարութը, է) նվա-
զեցնում են կարուսաները:

Թերությունները . ա) (պայմանա-
կան) պահանջում են, վոր հրամանատարը հե-
ռու գտնվի (բայց գրա փոխարեն նա հանգիստ
ե աշխատում, կնարքնացնում ե իր ամբողջ
ուշակրությունը նշանների և հրաձգության վրա,
նշաններին ավելի մոտ և գտնվում, հաճախ
գտնվում ե ընդհանուր զորական պետի մոտ),
բ) ճակատի առջևում մեռյալ տարածություն
ունեն, վերջինս վորոշվում ե ծածկարանի բար-
ձրության և ծածկարանի գագաթից մինչև մարտ
կոցը յեղած հեռավորության հարաբերությամբ
(Յաւանաչափի թեթև թնդանոթի համար $\frac{1}{60}$
ժամանակ մեռյալ տարածությունը հավասար
է չ վերստի, $\frac{1}{24}$ ժամանակ — չ վերստի, $\frac{1}{13}$ ժա-
մանակ — չ վերստի $\frac{1}{8}$ ժամանակ — 4 վերստի
և $\frac{1}{5}$ ժամանակ — 5 վերստի), գ) ծածկված դիր-
քերից հրաձգությունը խնամքով նախապատ-
րաստություն ե պահանջում, վոր կարելի յե-
իրագործել միայն բավականաչափ ժամանակ
ունենալու դեպքում:

Մեռյալ տարածությունը չեղո-
քացվում ե մարտկոցների փոխադարձ դասա-
վորությամբ, զնդացիքների զնդակոծությամբ,
կարձեցրած փողակի հրաձգությամբ։ Մեռյալ
տարածությունը կարելի յե նվազեցնել, մարտ-
կոցը ծածկարանից հեռացնելով։ Հորիցների և
լեռնային թնդանոթների համար մեռյալ տարա-
ծություններն ավելի փոքր են, նրանց դասա-
վորելը տեղանքում (անտառում ավելի հեշտ ե)։

Բ. Բայց դիրքեր — յերբ մինչև կը ակ-
բանալը հակառակորդին յերիս մե մարտկոցի
թեկուզ մի հրանոթը։

Թերություններն են. ա) նշան
ցույց տալը դժվարանում ե, բ) դժվարանում ե
նշանառության կետ ցույց տալը, զ) ուղղակի-
նշանառությունը հաճախ անկարելի յե դասնում
(ծուխը, ծիգերից տուժացած փոշին, հրետա-
սայիլ ցած գրությունը), դ) հրաժանաւարի աշ-
խատանքը դժվարանում ե մարտկոցի զեկավա-
րությամբ և դիառղությամբ, ե) դիրք զրավելն
ակածա շատապ ու վտանգավոր գործողություն ե
դառնում, զ) դիրքը փոխելը, թողնելն ու մա-
տակարարութը, համարյա անկարելի յեն, է) զո-
հերը մեծ են և կարող են ի զուր կորուստի-
պատճառ դառնալ:

Արժանիքներն են. ա) մեռյալ տա-

ըածությունների բացակայությունը, բ) պարզ յերեացող նշանների ժամանակ հրաձգության պատրաստվելու արագությունը:

Ծածկված դիրքերը գերազանց առաջ գործադրություն ունեն: Բաց դիրքերը գործադրություն են համապատասխան պարագայում: հակառակորդի անակնկալ յերեալիս, հետապնդման ժամանակ, վերջնապահի ծանր մարտերի ընթացքում հեծյալ մասսաների դիմ կովելիս:

Հորիզոնական հարթության ուժութեակոծության տեսքակետից:

ա) Լայն ուժքակոծութայն դիրք—հրաձգությունը հնարավոր եղանական ուղղություններով (սովորաբար մինչև 90° անկյունով) առանց հրանոթների ճակատը փոխելու:

բ) Սահմանապահ ուժքակոծության դիրքեր— հրաձգությունը հնարավոր ե մեկ կամ մի քանի վորոշակի ուղղություններով: Մասնավորապես դաշտյային մարտկոցներ, վորոնք թաքնված տեղավորվում են այնպես, վորդեպի թեն ուղղած հրաձգությունը հնարավոր ե միայն այն ժամանակ, յերբ հակառակորդը շատ ե մոտենում (դուրյթի ժամանակ), ուստի նրանք գործում են մարտի միայն այդ ըոսկեյին:

Մի քանի մարտկոցի դասավորություն. ա) գծային, բ) սանդղաձև, վոխագարձ աջակցությամբ, գ) յերկու և ավելի գծերով: Սանդղաձև դասավորված մարտկոցների միջև միջանցներն ու հեռակայություններն առնվազն 100 սաժեն են. գծերի միջև՝ առնվազն 300 սաժեն:

Հրետանու տեղավորման շրջանից ամենից առաջ պահանջվում ե, վորային տեղ դիտակետերի համար այնպիսի բարձունքներ լինեն, վարոնք, ըստ հնարավորության, իշխեն տեղանքի և հակառակորդի կողմից գրաված բարձունքների վրա, և ընդհանրապես պահանջվում ե, վորատեղ դիտակետեր գտնվեն: Հետեակը լիակատար աջակցություն պիտի ցույց տա այդպիսի իշխող բարձունքներ և բնագծեր գրավելու համար:

12. Հետևանու մարտական գրությունները:
ա) Կրակի գրություն—մարտկոցը կրակում է, բ) դիտողական—մարտկոցը պատրաստ կըակ բանալու, և գ) սպասողական— դիրքերը պատրաստ են զրագելու համար, բայց մարտկոցը կանգնած ե նրա մոտերքում հրանոթներն ըալշակների վրա ունենալով:

13. Գիրքի նախապատրասությունը, գրավելը
ու փոխելը։ Նախապատրասությունը
բաղկացած է. ա) դիտակետի ընտրությունից
ու սարքավորելուց և նրան հեռախոսով մարտ-
կոցի և հետևակի հետ միացնելուց, բ) մարտկո-
ցային ոժանդակի հրանոթների և քարշակների
համար տեղ ընտրելուց, գ) հրաձգության
համար տվյալներ նախապատրասություն։ Հե-
տագա կատարելագործությունն և, դ) խրա-
մատներ կառուցելը, ե) տեղանքը մարելը,
զ) քողարկութը (կեղծ մարտկոցներ, քողարկիներ
և այլն), լ.) կապ հաստատելը մարտկոցի մատ-
ցած մասերի, պետքի, հարեանների հետ։

Դիրք գրավելը—պետք ե ծածուկ, ըստ
հնարքորության արագ լինի. բայց դիրք զբավիլիս
—ըստ հնարքավորության, պետք ե զազմնի
կերպով յետելից մոտենալ քարշակները հանել
թիկունքում, հրանոթները ձեռքով քաշել և կա-
տարի վրա դնել։ Հարեան մարտկոցը—կարող ե
ոգնություն ցույց տալ կրակով, ծխաքողարկով։

Դիրք փռի ելը—միայն այն դեպքում,
յեթե նախկին դիրքից խնդիրը չէ
կարելի լուծել։ Յերբեմն բավական ե
միայն փոխել դիտակետը, առաջավոր դիտողներ
ուղարկել։ Դիրք փռի ելը մեծ մասամբ հնարա-

վոր ե միայն գիշերով, մանականդ բաց դիրքի
ժամանակ։

Դիրք թողնելը կամ՝ գեղիյետ փոխելը
կատարվում է միայն ավագ պետի կամ այն ընդ-
հանուր զորական պետի հրամանով, վորի հետ
կապված ե մարտկոցը։ Արկեր չունենալն ու մեծ
կորուստները հիմք չեն ծառայում դիրքերը
թողնելու համար։

14. Կրակի ուղղությունը փռկ դիրքից։
ա) Մարտկոցը զուգահեռաշար ե կազմում, այ-
սինքն՝ մարտկոցներին զուգահեռական ուր, զու-
թյուն ե տալիս, վորից հետո հրանոթները նշա-
դրվում են ըստ իրենց նշանառության կետերի,
բ) վորոշելով զիտակետից մինչև մարտկոցը
յեղած հեռավորությունը (խորիսիր) և գեղի
մարտկոցն ու դեպի նշանը տանող ուղղություն-
ների միջև յեղած անկյունը, հրամանատարը,
հաշվելով, կամ անկյունաչափ-տրանսֆորմատորի
ոգնությամբ՝ գտնում ե հիմնական հրանոթի
համար անկյունը, այդ անկյունի միջացով նշան
դնելով գեղի զիտակետը, հրանոթն ուղղված
կը լինի այնպես, վոր նըա արկերը կը պայթեն
դիտակետ—նշանագծի վրա։ Ավելի հաճախ հրա-
մանատարը չի տեսնում քողարկված ու ծած-
կված մարտկոցը, ուստի հիմնական հրանոթին
ուղղություն ե տրվում բռուսովի (կումբացույցի)

միջոցով. հրամանատարը բուսոլի ոգնությամբ փորսում ե դիտակետից գեղի նշանը տանող, այսինքն՝ հիմնական հրանոթի ուղղությունը, այնուհետև հիմնական հրանոթը մի այլ բուսոլի միջոցով ուղղում ե այդ ուղղությանը գուգահեռական գծով և հետո դարձվում ե այն անկյունի չափով, վորը փորսովում է հեռավորության և բուսոլի անկյունի ոգնությամբ, այնպես, վոր արկերը պայմեն դիտակետ նշանագծի վրա, Այնուհետև, ըստ հիմնական հրանոթի, ուղղում են նաև մուցած հրանոթները: Վերջապես կարելի յե կրակել ողային պայմենացներով մոտավորապես նշանի ուղղությամբ և չափելով այն անկյունը, վորով նրանք ընկել են նշանից աջ կամ ձախ. առաջնաբար (հաշվելով) ուղղել անկյունաչափի դրությունը և ծիգերը մոտեց. նել նշանին:

Դիրքերի նախապատրաստությունը (սկզբում բավականանալով միայն նրանով, ինչ վոր անհրաժեշտ ե) և կրակի ուղղությունն ընդհանուր առմամբ յերկարատե ժամանակ են պահանջում. ամենափոքր հնարավորության դեպքում անհրաժեշտ ե հրետանուն այդպիսի ժամանակ տալ, վորովին հետագա հրածագության աջող հետևանքները շատ ավելի մեծ չափով կարդարացնեն ժամանակի այդ կորուսը:

15. Կապը հրետանուն համար առաջնակարգ նշանակություն ունի, վորովին առեն արագ գույն գույն միջոցով փոխանցվում են վոր թե կարգադրություններ, այլ մի շարք բարդ թվական հրամաններ:

Տեխնիկական կապը հաստատվում է կըրտսերից դեպի ավտոգը, հրետանունց գեղի հետեւակը, հայտարաների միջին աջից դեպի ձախ: Հրետանային հետեւակի հետ, միայն ամենասերտ կապ պահպանելով, կարող ե նրան ոգնություն ցույց տալ. ամենալավ միջոցն ե – հետեւակային և հրետանային պետերի միատեղ տեղավորումը մարտական աշխատանքի ու կյանքի բոլոր գեղքերում. այն գիտակեար, վորից կատարված ե կրակի տեխնիկական դեկավարությունը, պետք ե ընդհանուր զարական պետք գիտակեալից աջ կամ ձախ կողմի վրա գտնվի, վորպեսզի զժվարացնի նրան յերեան հանելը: Գլխավոր միջոցն ե – հեռախոսը: Տեսողական ազդանշանները, սուրհանդակները, հաղորդիչների շղթան – լրացուցիչ միջոցներ են:

16. Հետեւակի հետ միասին տեղափորությունը պիտի բավարարի գործողությունների հարմարությանը և հետեւակի ապահովությանը: Այդ ելքում ե չափի տակ դնել մարտկոցների հեռավորությունը:

հետևակի առաջավոր գծերից ամեն
ինչ կախված ե տեղանքից ու պարագայից: Հետևակը չպիտի տեղափորձի մարտկոցների դիրքերից 200—300 քայլից ավելի մոտ, վորպեսզի ժիաժամանակ շտուժի հակառակորդի լրակից:

Հրետանին պաշտպանվում ե հետեւվակի ընդհանուր գասավորությամբ. յերբ հրետանին առանձին ե տեղափորձած, մանավանդ գիշերը, և յերթի ժամանակ, նրա համար հատուկ պաշտպանակ ե նշանակվում:

Իր զարթերի զիխավերեվից կրակելը նորմալ յերեսութեաւ հետեւակի անվտանգ հեռավորությունը կախված է աեղանքից. հարթ տեղում 300 սաժենից պակաս չպիտի լինի: Ռմբակոծվող նշանին մոտենալու ժամանակ, յերբ փորձնական ձիշտ հրաձգություն ե կատարված և սերտ կապ կա, հրետանին հաճախ կարող ե աջակցել կրակով մինչև սվինամարտի ըոսենայդպիսով գրոհողները պաշտպանվում են հակառակորդի գնդացրային և հրացանային կրակից անպատճ կերպով հարվածվելուց: Հրետանին ձեռք ե առնում բոլոր միջոցները: Վորպեսզի պատահաբար չորվածի իր զորքերին:

ԱՐԿԵՐԻ ՍԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Հիմնական գըություններն են. թիւ կուն-

քից մեծ չափով փոխադրելը, ճակատում՝ խնայողաբար բանեցնելը, պաշարը ժամանակին լրացնելու մասին հոգատարությունը, պահանջվող քանակի հաշվիվը և լրացման կազմակերպությունը (ոպերական գործողությունների) սկզբում:

Հաշվարքի համար հիմք ե ծառայում տաք կովում մի որում յուրաքանչյուր հրանոթի բանեցրած արկերի միջին քանակը՝ մարտի հատկությունների, դերի ու նախկին պատերազմների մարտական փորձառության հիման վրա. յերբ հատուկ խնդիրներ են արված (որինակ՝ լարափակոցներում անցքեր բանալ), հաշվարքի մեջ համապատասխան ուղղումներ են արվում:

Յուրաքանչյուր հրանոթի մի որգածական թվականը միջին թվերը կարող են ընդունվել՝ 250 հատ արկ՝ 3 մատնաչափի թնդանոթի համար, 150 հատ՝ 48 գծանի հորիցի և 42 գծանի թնդանոթի համար և 100 հատ՝ 6 մատնաչափի հորիցի համար:

Մատակարարումն սկսվում է առաջին իսկ ձիգից. պետք ե աշխատել մատակարարումն իրագործել մատակարարող մարմիններն առաջ շարժելով և խուսափել գա-

տարկ մասերը լրացման համար թիկունք ուղարկելուց, Մարտկոցներում (նաև նրանց մարտկոցային սժանդակիներում) ամեն որ առավոտյան նախորդ որվա բանեցրած արկերի թիվը պիտի լրացված լինի, Դրան սգնում ե հաշվառումը, վոր կատարվում ե ամեն որ յերեկոյան:

Մատակարարման կազմակերպությունը հիմնվում ե, ա) մատակարարող մարմինների ունակության վրա, (գաղտնի յեպահնում), վոր արտահայտվում է յուրաքանչյուր հրանոթի մի որվա ծախքով և բ) որվա գընացքի վրա, վոր այդ մարմինը կարող ե կատարել մի որվա ընթացքում: Զիու ուժից ոգտվելու համար մի որվա գնացքը 40 վերստից ավելի չպիտի չպիտի լինի:

Այդ տվյալների հիման վրա վորոշվում ե այն ամենամեծ հեռավորությունը, վորի վրա կարող ե գտնվել մատակարարող մարմինը մատակարարման ամենասուժիկ առաջավոր կեռից՝ (մարտկոցների գիրքերի գծերից, նրանց մարտկոցային ոժանդակներից, կամ պարկերի (կրանքների, առաջավոր շարաններից, և այլն): Այսպես, որինակ յեթե մատակարարող մարմինը կարող ե վերցնել մի որվա բանեցնելու պաշար, այդ գեղքում նա կարող ե գտնվել 20 վերստից վոչ

հեռու, յիթե նա կես որվա բանեցնելու պաշար ե վերցնում, նա կարող ե գտնվել 10 վերստից վոչ հեռու, (որական յերկու անգամ փոխադրություն՝ գեղի վիրքը և դիրքից զառնալը): Յուրաքանչյուր մատակարարող մարմնի ունակությունն իմանալով հեշտությամբ կարելի յեպահնումակներ կազմել մատակարարող մարմինների ամենամեծ հեռավորության մասին, վորոնց վրա նրանք կարող են իրարից գեղի խորքը գրանը վեր, կարելի յեպահնում վորոշի մարտկոցների գիրքերի թույլատրելի ամենամեծ ընդհանուրը հեռավորություններն ավելի մեծ են, անհրաժեշտ ե, կամ մատակարարող մարմիններն ուժեղացնել լրացուցիչ փոխադրական միջոցներով (ավտոմոբիլներով փոխադրություն կազմակերպել, նեղ գծանի յերկաթուղի անցկացնել) կամ վազորոք առաջավոր այնպիսի պահեստներ ստեղծել, վորոնք համեմատաբար ավելի սուտ գտնվեն դիրքերին, քան այն կայարանները, վորտեղից կատարվում ե մատակարարումը:

Հրացանների և ավտոմատիկ դենքերի փամփուշների մատակարարությը հիմնված է նույն սկզբունքների վրա, սա-

կայն նույնքան հաստատուն որինաչափություն
չունի, վորպես հը մոռթների արկերի մատակա-
րաբումը. հետեազորում (և հեծելազորում) փամ-
փուշաների ծախքը յենթակա յե ավելի մեծ
